Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՉՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կամսարականների հեռանալը երկրի քաղաքական ասպարեզից և իրենց տիրույթներից զրկվելը ժամանակագրությամբ գրեթե համընկնում է արաբական լծի թոթափման և Հայաստանի քաղաքական ինքնուրույնության վերականգնման հետ։ Երկրում անկախության նվաճումը մեծապես նպաստեց տնտեսական հետագա վերելքին։ Առևտրական ճանապարհների խաչմերուկներում առաջ եկան բազմաթիվ նոր քաղաքներ ու ավաններ, որոնք հներին զուգընթաց տնտեսական ու մշակույթի արգասավոր օջախներ դարձան։ Այս հանգամանքը առավելապես ակնհայտ էր Շիրակի համար, որը անցնելով Բագրատունիների ձեռքը դարձավ արքունական ոստան։ Շիրակի կենտրոնումն էր գտնվում Անին՝ Հայաստանի խոշորագույն քաղաքը և երկրի մշակույթի, տնտեսական ու քաղաքական կարևորագույն կենտրոններից մեկը։

Չնայած Բագրատունիների ուշադրության կենտրոնը հիմնականում Անին էր, որը նրանք զարդարում էին փառահեղ ու մոնումենտալ շինություններով, այնուհանդերձ նրանց օրոք Շիրակի տարբեր վայրերում կանգնեցված բազմաթիվ շինություններից շատերը, իրենց գեղարվեստական և շինարարական արվեստի մակարդակով, ամենևին չէին զիջում Անիի լավագույն կառույցներին։ Շինարարական գործունեության մեջ Բագրատունիները միայնակ չէին։ Այս շրջանում առանձնապես աչքի ընկան իշխանական տները, հատկապես Պահլավունիները և աշխարհիկ ու հոգևոր դասի առանձին մարդիկ։ Ի դեպ, Անիից դուրս կառուցված Շիրակի հուշարձանների արձանագրությունները Բագրատունիների անունը որպես շինողի չեն հիշատակում (բացի Հոռոմոսի մի արձանագրությունից)։ Կասկածից վեր է, իհարկե, որ նրանք ունեցել են շինություններ Անիից դուրս, գոնե Շիրակավանում, որը սկզբնական շրջանում նրանց մայրաքաղաքն էր, սակայն դրանք պարզապես չեն արձանագրվել։ Բոլոր դեպքերում, հակառակ Կամսարականների, որոնք իրենց շինությունները հիմնում էին դավառի տարբեր կողմերում և քիչ ուշադրություն էին առանձնացնում իրենց նստավայրերին, Բագրատունիները առավելապես տարված էին մայրաքաղաքը գեղեցկացնելու և ամրացնելու հոգսերով։

Այս շրջանում արձանագրություններ հանդիպում են անհամեմատ ավելի առատորեն, քան Կամսարականների ժամանակ։ Դրա պատճառը, թերևս, մասնավոր նախաձեռնողների իրավական պայմանների և տնտեսական հնարավորությունների բարելավումը պետք է համարել։ Եթե նախկինում շինությունները կատարում էին աղնվական տները, ապա Բագրատունյաց շրջանում շինության արձանագրությունները հանդիպում են ամեն խավի մարդկանց անունով։ Առանձնապես մեծ էր այս հարցում խոշոր միաբանությունների դերը, որոնք առաջ գալով երկրի տարբեր վայրերում, հոգևոր ու աշխարհիկ բնույթի շինությունների ամբողջական կոմպլեքսներ էին կառուցում։

Բագրատունիների շրջանում առանձնապես աչքի էր ընկնում նաև վիմական հիշատակարանների արտակարգ բազմազան բովանդակությունը։ Արձանագրում էին ոչ միայն եկեղեցիները, այլև կոմունալ նպատակներին ծառայող շինությունների պատերը, խաչքարերը, սովորական մարդկանց տապանաքարերը՝ նվիրատվական, տնտեսական, իրավական և այլ բնույթի տեղեկություններով։ Այդպիսիներից է Բագրատունյաց շրջանի մեզ հասած ամենահնագույն արձանագրությունը Շիրակում, թվագրված ՅԺԳ (864) թվականով։ Այդ արձանագրությունը փորագրված է մի քարի վրա, որը գտնվում է Թալինի՝ Ներսեհ Կամսարականի կառուցած եկեղեցու մեջ։ Արձանագրությունը խիստ վնասված է, սակայն երևում է հեղինակի անունը՝ ՍԻՄԵՈՆ ՎԱՆԱԿԱՆ։

Ինչպես երևում է քարի ձևից, դա տապանաքար է.

ՅԺԳ ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԷԵՍ ՍԻ-
ՄԵՈՆ ՎԱՆԱԿԱՆ Ի ՏՐԷ ԱՄՍԻՆ...
ՄՈՒՏԵՐ... ԱՍԱ... ԵՒ... ԱՒՈՂ...

Վնասված է և անընթեռնելի առանձնապես երրորդ տողը։ Մեզ հաջողվեց վերականգնել միայն առաջին տողը։

Արձանագրության մեջ ուշադրություն է գրավում ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ձևը թուականութեան փոխարեն, որը արձանագրության լեզվի տեսակետից ժամանակագրության հարցում համապատասխան կարող էր լինել ավելի ուշ շրջանի համար։ Սակայն թվականից բացի, արձանագրության հնության մասին են վկայում նաև նրա տառաձևերը։

* * *

Բագրատունյաց շրջանի աչքի ընկնող հուշարձաններից են ներկայիս Պեմզաշեն գյուղի շրջակայքում, կիսավեր վիճակում պահպանվող, վաղեմի փարթամ և շքեղ շինությունները։

Գյուղից մոտ 1 կմ դեպի հարավ, ձորի մոտ, կանգնած է մի եկեղեցի, որի մնացորդները ցույց են տալիս նրա ճարտարապետական հարուստ և գեղեցիկ ձևերը։ Այս եկեղեցին գրականության մեջ հայտնի է Մակարավանք անունով, չնայած շինարարական արձանագրությունը այն անվանում է ս. Գևորգ[1]։

Եկեղեցու արևմտյան պատին կից մնացել է կամարածածկ շինության մի բեկոր, որի հետքը պատի վրա ցույց է տալիս, որ բավական մեծ է եղել և ծառայել է որպես դավիթ։

Շինարարական մի արձանագրության մեջ, որը գտնվում է եկեղեցու հյուսիսային խորանի արևելյան պատին, ներսից շինությունները հիշատակված են հոգնակի թվով՝ ԶՎԱՆՔՍ ՍԲ ԳԵՈՐԳՈՅ ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ ԵՒ ԱՄԵՆ ԱՂԱԳԱՒՔ ՇԵՆ։ Սակայն նրա մոտակայքում շինությունների այլ հետքեր չեն նշմարվում։ Եկեղեցուց արևմուտք, մի քանի քայլի վրա, ձորի մեջ կա սագաշեն, քառանկյունի մի շինություն, որը, սակայն, ժամանակի առումով, շատ ուշ շրջանի է։ Արձանագրության մեջ հիշատակված «զվանքս» և «զեկեղեցիքս» բառերը կարող են վերաբերել միայն տեղի եկեղեցուն և նրանից որոշ հեռավորության վրա

1 Ինչպես ցույց են տալիս ուշ շրջանի արձանագրությունները, եկեղեցին Մակարավանք է կոչվել հետագայում։

գտնվող մի քանի շինություններին, որոնցից միայն մեկն է պահպանվել։ Ժամանակին այստեղ խոշոր միաբանություն է եղել[2]։

Արձանագրությունը խիստ վնասված է և միաժամանակ անավարտ։ Առաջին վեց տողերից բացակայում են նրանց վերջավորությունները։

Այս արձանագրությունից հրատարակվել են միայն նրա առաջին հինգ տողերը[3]։ Հետևանքն եղել է այն, որ հրատարակողները չեն իմացել անգամ, որ դա շինարարական արձանագրություն է։

Ամենից ավելի վնասված է VI տողը։ Նախ՝ կասկածելի է թվում V տողի վերջում վերականգնած ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՍ։ VI տողի սկզբում նշմարվում է... ՏՈՆԻՍ անվանավերջը, որը ոչ մի կերպ չի կապվում ՀԱՅՐԱՊԵՏՍ բառի հետ։ VII տողը սկսվում է... ԵՐՈՐԴԻՍ բառով, որը կարգային թվականի վերջածանց լինել չի կարող, քանզի գրված է մեկ Ր-ով։ Այս բառը, մեր կարծիքով, ՔՎԵՐՈՐԴԻՍ բառի կրկնությունն է և փորագրվել է այն պատճառով, որ VI տողը տեղադրվելով երկու քարերի հանդիպման եզրին, փորագրելիս կոտրատվել է։ Հիշտ կարդալու համար այդ կրկնությունը պետք է բաց թողնել։ Հենվելով մեր տեղում կատարած ուսումնասիրության վրա, V—VII տողերը առաջարկում ենք վերականգնել հետևյալ ձևով՝

ՇԱՀՆՇԱՀԻ. ԵՍ ՍԱՀԱԿ [ԵՒ ՀԱՅՐ ԱՆ]-
ՏՈՆԻՍ ՔՎԵՐՈՐԴԻՍ [ԵՒ ՍԱՀԱԿ]
([ՔՎ]ԵՐՈՐԴԻՍ) ՇԻՆԵՑԱՔ ԶՎԱՆՔՍ [ՍԲ]

Ուշադրություն է գրավում նաև այն, որ արձանագրությունը լրիվ ավարտվում է X տողում։ Նրանից հետո եկող շարունակությունը, ինչպես երևում է, որոշ ժամանակից հետո է փորագրվել։ Այդ հատվածում հիշատակվել է Սահակ՝ Անտոնի քրոջ որդին, որի վաղաժամ (ԿԻՍԱՒԻՐԵԱ) մահը ստիպել է շարունակել արձանագրությունը բարեխոսություն մաղթելու համար՝ այս անգամ ողբագին, խոր ցավակցական շարադրանքով։ Դրան հետևում է ինչ-որ աղոտ և անավարտ բացատրություն՝ ՈՐ ԶԳՐԵՑԻ ԶՅԻՇԱՏԱԿ ԵՒ...

Ի մի բերելով արձանագրությունը վերականգնելու վերաբերյալ ունեցած մեր դիտողություններն առաջարկում ենք այն հետևյալ վերծանությամբ՝

ԻՆՆԾ (1001) ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ]-
ՈՑ, Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ[ԵՆԱՍ Ս]-
ԱՐԳՍԻ ՀԱՅՈՑ ԿԱ [ԹՈՂԻԿՈՍԻ]
ԵՒ Ի ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵ[ԱՆ ԳԱԳԿԱ]
ՇԱՀՆՇԱՀԻ. ԵՍ ՍԱՀԱԿ [ԵՒ ՀԱՅՐ ԱՆ]-
ՏՈՆԻՍ ՔՎԵՐՈՐԴԻՍ՝ [ԵՒ ՍԱՀԱԿ]
([ՔՎ]ԵՐՈՐԴԻՍ) ՇԻՆԵՑԱՔ ԶՎԱՆՔՍ [ՍԲ]
ԳԵՈՐԳՈՑ ԵՒ ԶԵԿԵՂԵՑԻՔՍ [ԵՒ ԱՄԵՆ]
ԱՂԱԳԱՒՔ ՇԵՆ. Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԵ[ԱՆ]
ՄԵՋ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՒԱՏՍՅԵԼՈՑ։

---

2 Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հ. 2, 1948, էջ 134։ Ա. Մանուչարյան, Պեմզաշենի չհրատարակված արձանագրությունը, ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), № 5, 1965։

3 Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 166։ Կ. Կոստանյան, Վիմական տարեգիր, ՍՊբ, 1913, էջ 12։

ԵՒ ԿԻՍԱՒԻՐԵԱ Ի ՔՍ ՓՈԽԵՑԱՒ
ԱՆԲԱԽՏ ԴԱՒԻԹ, ՈՐ ԶԳՐԵՑԻ ԶՅԻ-
ՇԱՏԱԿ ԵՒ...

Ալիշանը հաղորդում է, որ «Յորմն արեւելեան արտաքուստ դրեալ է, սակաւ մի խանգարեալ եւ անթուական արձանս»[4]։ Ներկայումս այդ արձանագրությունը չի պահպանվել։ Ինչպես երևում է Ալիշանի բերած բնագրից, այն նույնպես շինարարական է՝ նորոգման բովանդակություն ունի՝

ԿԱՄԱՒՆ ԱՅ ԵՍ ՀԱՅՐ ՎԱՐԴԱՆ ԵՂԵ ՊԱՏՃԱՌ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ՀԻՆ
ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՍ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒ-
ԹԵԱՄԲ ՇԻՆԵՑԻ ԶՎԱՆՔՍ։ ԱՂԱՋԵՄ ԶԲՆԱԿԻՉԿԴ ԶԻՍ

ԵՒ ԾՆՈՂՍ ԻՄ ՅԻՇԵՑԵՔ Ի ՏՐ։

Ալիշանը Վարդանի անվանը հաջորդող բացակայող հատվածում ենթադրում է, որ եղել է ՊԱՏՃԱՌ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ, սակայն դա հավանական չէ, որովհետև առանց այն էլ արձանագրության մեջ խոսվում է շինելու մասին։

Այս արձանագրությունը, մեր կարծիքով, պետք է ավելի հին լինի, քան նախորդը, բայց, ամենայն հավանականությամբ, եկեղեցու շինարարական վավերագիրը ոչ նախորդն է, ոչ էլ այս։ Երկու արձանագրությունները համեմատելիս ուշադրություն են գրավում երկու հանգամանք՝ նախ առաջինի բովանդակությունից ստացվում է, որ նրա հեղինակները կառուցել են առնվազն երեք, թերևս և ավելի եկեղեցի՝ եթե հաշվի առնենք, որ հիշատակվել են «զվանքս եւ զեկեղեցիքս» հոգնակի թվով։ Իսկ Մակարավանքն էլ հիշատակվել է առանձին։ Նման մեծածախ շինարարական աշխատանքներ կարող էր նախաձեռնել միայն աչքի ընկնող մեծահարուստ, մեծատոհմիկ մարդ, որպիսին արձանագրության մեջ բացակայում է։ Հիշատակված Սահակը մատենագրական աղբյուրներում բոլորովին չի հիշվում։ Տեղեկություններ չկան նաև Դավթի ու Անտոնի մասին։ Նրանց մասին լուռ են նույնպես և վիմագրական աղբյուրները։ Այս ամենից հետևում է, որ իրենց կարողությամբ նրանք հազիվ թե մեծահարուստ կամ մեծատոհմիկ մարդկանց թվին պատկանեին։ Երկրորդը՝ ինչպես երևում է հարտարապետական առանձնահատկություններից, այս եկեղեցիները պետք է որ կառուցված լինեն X դ.։ Վստահություն չի ներշնչում նաև արձանագրության տեղադրությունը։ Շինարարական արձանագրությունները ներսում, խորանի պատին երբեք չեն փորագրվել։ Դրանք սովորաբար տեղադրում էին արտաքին պատին՝ աչքի ընկնող տեղում։ Այդպես է տեղադրված եղել, ըստ Ալիշանի տեղեկության, երկրորդ արձանագրությունը, ընդ որում վերջինս համեստորեն հաղորդում է մեկ եկեղեցու շինության մասին, այն էլ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ բացատրությամբ։ Սակայն արձանագրության մեջ կա մի շատ կարևոր արտահայտություն՝ ՀԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՍԲ ՈՒԽՏԻՍ, որը նախապես ենթադրում է տեղում իրենից առաջ գոյություն ունեցող շինության հանգամանքը։

Այսպիսով եկեղեցու շինության արձանագրությունը մեզ չի հասել, գուցե և չի եղել։ Հաշվի առնելով այս հանգամանքները պետք է ենթադրել, որ այս արձանագրությունները տեղեկացնում են միայն նորոգման մասին։

---

4 «Շիրակ», էջ 166։

5 Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, հ. 2, էջ 134։

* * *

Արթիկի կենտրոնում կան երկու մեծ եկեղեցիներ՝ ս. Գրիգոր և ս. Աստվածածին։ Երկուսն էլ, ինչպես պարզված է ճարտարապետական առանձնահատկություններից, կառուցվել են VII դարում։ Սրանց շինարարական արձանագրությունները չեն պահպանվել։ Ժամանակին ս. Գրիգոր եկեղեցու վերին մասում, պսակի տակ, գոյություն է ունեցել եկեղեցին գոտնորող մի արձանագրություն։ Ինչպես երևում է տեղագրությունից, դա պետք է շինարարական լիներ։ Սակայն ներկայումս եկեղեցու վերին մասը ավերված է և արձանագրությունը չի պահպանվել։

Այս եկեղեցու արևմտյան կողմում, պատուհանի տակ, ագուցված կա մի քար, վրան շինարարական բովանդակություն ունեցող հետևյալ արձանագրությունով՝

ԻԹՎԻՆ ՉԽԲ (1293) ԵՍ ԱՐՏԱՇ ԵԻ ՎԱՆԵՍ ԵԻ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԽՈՒՏԼԵՐՍ ՎԵՐԱԿԱՆԿՆԵՑԻ ՉԽԱՉՍ Ի ԲԱՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՄԵՋ ԵԻ ԾՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ ՀՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԵՔ ՅԻՇԵՑԵՔ...

Արձանագրված այս քարի վրա դրված է խաչքարի մի բեկոր։

Այս արձանագրության մեջ գոյություն ունի տարակուսելի մի հանգամանք՝ այստեղ նորոգման (վերականգնման) օբյեկտը անվանված է ս. Խաչ։ Ճիշտ այնպես, ինչպես սովորաբար գրվում է խաչքարերի կանգնեցման դեպքում, իսկ եթե միաժամանակ նկատի առնենք, որ արձանագրված քարը գտնվում է խաչքարի տակին, ապա կարող է թվալ, որ այն իսկապես վերաբերում է խաչքարին։ Սակայն, նախ պետք է ասել, որ այդ խաչքարը իր տեղում չի գտնվում։ Դա իրենից ներկայացնում է կոտրված մի բեկոր, որը հարմարեցվել և ագուցվել է պատուհանի մեջ այն փակելու նպատակով։ Իսկ արձանագրված քարը, պատուհանի ստորին եզրը կազմող շինության իսկական քարն է։ Երկրորդ և ամենակարևոր հանգամանքը կայանում է նրանում, որ ՎԵՐԱԿԱՆԿՆԵՑԻ արտահայտությունը ակնհայտորեն նորոգման իմաստ է բովանդակում և կարող է միայն շինությանը վերաբերվել և ոչ թե կոթողին։ Այսպիսով ՉԽԱՉՍ բառի տակ հնարավոր է միայն եկեղեցին հասկանալ։ Ուշադիր զննելով հուշարձանը, եկանք այն համոզմանը, որ արձանագրության կողմից հիշատակված նորոգումը հիմնականում կարող էր վերաբերվել երեսպատման քարերին, առանձնապես եկեղեցու միջին և վերին մասերում։ Նորոգման նկատելի հետքեր են կրում նաև արևելյան հատվածը ամբողջությամբ, ինչպես և հարավային մուտքը և հյուսիսային պատի առանձին հատվածներ։

Արձանագրությունից հայտնի է դառնում, որ նորոգողն է եղել Հովհաննես անունով մի վանական։ Ամենայն հավանականությամբ, նա տեղի միաբանության անդամներից է եղել։

Ընդհանուր առմամբ արձանագրությունը լավ է պահպանվել։ Մի փոքր վնասվածք կա IV տողի սկզբում, որը հեշտությամբ վերականգնվում է։

* * *

Արթիկի հարավային ծայրամասում կանգնած է վայելչագեղ մի կենտրոնագմբեթ եկեղեցի, որը գրականության մեջ հայտնի է Լմբատավանք անունով։ Եկեղեցին մյուսների հետ միասին կառուցվել է VII դարում։ Սակայն շինարա-

ական արձանագրություն չի ունեցել։ Հետագայում ենթարկվելով նորոգման, նրա վրա փորագրվել է մի հետաքրքիր արձանագրություն։ Այդ արձանագրության կարևորությունը պայմանավորված է նրանով, որ ավանդում է շինարարական մի չափազանց բարդ աշխատանքի մասին։ Դատելով եկեղեցու ճարտարապետական առանձնահատկություններից, այն գմբեթավոր է եղել ի սկզբանե, այնպես, որ այս արձանագրությունը ավանդելով եկեղեցու միայն այդ հատվածի մասին, անտարակույս նորոգման իմաստ է արտահայտում։ Արձանագրությունը թվագրված չէ։ Ելնելով տառաձևերից և լեզվի ոճական ընդհանուր բնութագրից, հավանական ենք գտնում, որ այն փորագրված լինի XIII դ. սկզբներին։

Արձանագրությունը գտնվում է արևմտյան պատուհանի վերին մասում։ Տեղադրված է երեք քարի վրա։ Առաջին վեց տողերը փորագրվել են վերին քարին, իսկ մնացած չորսը՝ ստորին երկուսի վրա։ Ստորին մասը խիստ հողմնահարված է և վերականգնվում է մեծ դժվարությամբ։ Վնասվածքներ ունի նաև վերին մասը։ Վերականգնելով արձանագրության առանձին հատվածները, առաջարկում ենք այն հետևյալ վերծանությամբ՝

ՈՐԴԻԱԻՍ ՄԻ
ԱՆԵՑԱԻ ՀՍԲ ԼՄԲԱՏՍ. ԵՍ
...ԵԻ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ... ԶՄԵՐ ՀՈԳԱԲԱԺ
ՇԻՆԵՑԱՔ ԶԳՄԲԵԹ ԵԿԵՂԵՑՈՒՍ ԵԻ ՏՈՒԱՔ ԶՎ-
ԱՆՔՍ ԱՅԳԻ ՅԱՌՈՒԾ, ԶԳՈՄ ՂՈՒԱՆԻ Ի ՁԵՌ-
Ն ՀԱՒՐ ՄԱՄԻԿՈՆԻ ԵԻ ԱՅԼ ԵՂԲԱՐՑՍ, ՈՐՔ
ՓՈԽԱՐԵՆ ՀԱՏՈՒՑԻՆ ՄԵՋ ՊԱՏԱՐԱԳԵԼ
:Ե: ԱՒՐ ԳԻ... [ԱՂ]ԱՒԹԻՄ...
Ի ՍԲ Ա... [Ե]ՏՈՒ. ՊԱՀՈ-
ՂՔ ԱՒՐ[ՀՆԻ ԱՏ ԻՍԿ ԵԹԵ ՈՔ] ԽԱՓԱՆԷ [ՆՁՈՎ]Է

Արձանագրության վնասվածությունը հնարավորություն չի տալիս վերականգնել կառուցողների անունը։ Իմանում ենք միայն, որ դրանք եղել են ամուսիններ և կառուցել են Մամիկոն վանահոր ժամանակ։ Արձանագրության մեջ միակ պահպանված անունը դա Մամիկոնն է։ Ցավոք, Լմբատավանքի այլ արձանագրություններում նրա անունը բոլորովին չի հանդիպում և այդ պատճառով համեմատելու և ժամանակը ճշտելու հնարավորությունը առայժմ բացառված է։

Լմբատավանքի այլ արձանագրություններից երևում է, որ ժամանակին եկեղեցին խիստ ավերածությունների և քայքայման է ենթարկվել։ Վերականգնման և նորից ծաղկման համար ժամանակագրական տեսակետից ամենից ավելի Զաքարյանների տիրապետության շրջանն է հավանական թվում։

Զաքարյանների շրջանը, Թ. Թորամանյանի բնութագրով, հայ ճարտարապետության չորրորդ վերածնության շրջանն է։ Զաքարյանների օրոք, նրանց տերիշխանության մեջ մտնող տերիտորիայում, վերականգնվեց երկրի տնտեսական ու մշակութային կյանքը։ Չնայած Զաքարյանների տիրապետության կարճատև դոյությանը, հայ արվեստի բուռն վերածնությունը XII—XIII դդ. նոր էջ բացեց մշակույթի զարգացման ընդհանուր պատմության մեջ։ Սակայն հայ ժողովրդի խաղաղ շինարարական աշխատանքը, որը պետք է վերածնության հիմք դներ մշակույթի նոր պատմության շեմին, խափանվեց խավարամիտ ու բարբարոս ցեղերի ասպատակությունների հետևանքով։ Այս բազմաթիվ արձա-

նագրությունները ավանդելով անընդհատ կրկնվող նորոգումների մասին, յուրօրինակ մի վկայություններ են ժամանակի եղերական անցքերի վերաբերյալ։

Ներկա հոդվածում ուսումնասիրված է 5 արձանագրություն, որոնք կարևոր են այդ հուշարձանների շինության պատմության առումով։ Միաժամանակ պետք է նշել, որ այդ բնույթի արձանագրությունները առավելագույն մեծ կարևորություն են ներկայացնում առհասարակ Հայաստանի շինարարական ժամանակագրությունը կազմելու գործում։